ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/243

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.11.2020թ. թիվ 26/26-1/16935-2020 գրությամբ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 09.11.2020թ. թիվ Ե/40/2126-20 գրության հիման վրա 13.11.2020թ. թիվ 26/26-1/16935-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում

չի ներկայացվել:

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/243 ընթացակարգի շրջանակներում 23.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.11.2020թ. թիվ Ե/40/2126-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ 02/07 պայմանագիրը:

Հաշվի առնելով Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից 15.10.2020թ. ներկայացված թիվ 02/10/20 գրությունը և Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 03.11.2020թ.»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/243 ընթացակարգի շրջանակներում 23.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/243 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/243 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ 02/07 ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման կապալային աշխատանքի պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Ծավալաթերով, նախատեսված աշխատանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 2-ով՝ Օրացուցային գրաֆիկով, սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողի հարթեցում	«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածք մուտքի ստանալու օրը	Թույլտվություն ստանալու օրվանից հաշված 60 օրացուցային օր
2	Փռված և հարթեցված շերտերի սարքվածք ավազակոպճային խառնուրդով՝ 100մմ հաստությամբ		
3	Ճանապարհի իրականացում Մ 200 բետոնով՝ 12 սմ հաստությամբ		

3. Պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք մուտքի թույլտվություն ստացել է 27.09.2020թ.:

4. Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը Պատվիրատուին ուղղված 15.10.2020թ. թիվ 02/10/20 գրությամբ հայտնել է հետևյալը.

5. «Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքների իրականացման ընթացակարգի շրջանակներում կնքված 02/07 ծածկագրով պայմանագրի իրականացումը ստեղծված իրավիճակից ելնելով հնարավոր չէ, քանի որ ընկերության երկու աշխատակիցները որոնց համար ստացվել էին անցագրեր, այժմ չեն գտնվում ՀՀ-ում՝ մեկնել են Արցախ:

Խնդրում ենք ելնելով պատերազմական իրավիճակից փոխադարձ համաձայնությամբ լուծել պայմանագիրը»:

6. Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին ուղղված 03.11.2020թ. թիվ Ե/40/2097/20 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ 02/07 պայմանագիրը:

Հաշվի առնելով Ձեր 15.10.2020թ. թիվ 02/10/20 գրությունը և Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները՝ Պայմանագիրը միակողմանի լուծվում է»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 03.11.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2020թ. թիվ 26/26/16935-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 09.11.2020թ. թիվ Ե/40/2126-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ 02/07 ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման կապալային աշխատանքի պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Ծավալաթերով նախատեսված աշխատանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 2-ով՝ Օրացուցային գրաֆիկով, սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողի հարթեցում	«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածք մուտքի ստանալու օրը	Թույլտվություն ստանալու օրվանից հաշված 60 օրացուցային օր
2	Փռված և հարթեցված շերտերի սարքվածք ավազակոպճային խառնուրդով՝ 100մմ հաստությամբ		
3	Ճանապարհի իրականացում Մ 200 բետոնով՝ 12 սմ հաստությամբ		

Պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք մուտքի թույլտվություն ստացել է 27.09.2020թ.:

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը Պատվիրատուին ուղղված 15.10.2020թ. թիվ 02/10/20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքների իրականացման ընթացակարգի շրջանակներում կնքված 02/07 ծածկագրով պայմանագրի իրականացումը ստեղծված իրավիճակից ելնելով հնարավոր չէ, քանի որ ընկերության երկու աշխատակիցները որոնց համար ստացվել էին անցագրեր, այժմ չեն գտնվում ՀՀ-ում՝ մեկնել են Արցախ:

Խնդրում ենք, ելնելով պատերազմական իրավիճակից, փոխադարձ համաձայնությամբ լուծել պայմանագիրը»:

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին ուղղված 03.11.2020թ. թիվ Ե/40/2097/20 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ 02/07 պայմանագիրը:

Հաշվի առնելով Ձեր 15.10.2020թ. թիվ 02/10/20 գրությունը և Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները՝ Պայմանագիրը միակողմանի լուծվում է»:

Պատվիրատուի կողմից 03.11.2020թ. Տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Պայմանագրի 3.1.4-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխ-անում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ՀՀ Կառավարության 27.09.2020թ. N 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ սեպտեմբեր 27-ին ռազմական դրություն հայտարարվելու և երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանն օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-8/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի տեղային գոտու պարագծով սպասարկման ճանապարհի բետոնալցման աշխատանքները Պայմանագրով սահմանված ժամկետում, այն է՝ թույլտվություն ստանալու օրվանից (27.09.2020թ.) հաշված 60 օրացուցային օրում իրականացնելու հնարավորությունից, որի վերաբերյալ վերջինս 15.10.2020թ. թիվ 02/10/20 գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» նախատեսված, որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.11.2020թ. թիվ 26/26-1/16935-2020 գրությամբ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**